ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/519/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17 դեկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի, 2025 թվականի դեկտեմբերի 17-ին քննելով «Բիզնես զեթ-փիար» գովազդային հրատարակչություն ՍՊ ընկերության տնօրեն (այսուհետ՝ նաև Ընկերություն) Վարդան Աստվածատրյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/519/2025 վարչական գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Ի.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.1-ին հոդվածով վերապահված գործառույթը, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) 2024 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Տարեկան հաշվետվություն) ստուգման արդյունքում վերհանված տվյալները, պարզել է, որ Ընկերության

անունից Կուսակցությանը կատարվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված չթույլատրված նվիրատվություն, այն է՝

Ընկերության անունից 2024 թվականի նոյեմբերի 28-ին Կուսակցության բանկային հաշվին կատարվել է փոխանցում՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

1.2 Վերոնշյալ իրավախախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 18-ին թիվ 01/4469-2025 գրությամբ Վարդան Աստվածատրյանին է ուղարկել ծանուցում՝ իրավաբանական անձի անունից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու առերևույթ իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով՝ ծանուցումը ստանալուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին՝ մասնակցելու Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին գործի քննությանը մասնակցելու համար: Վարդան Աստվածատրյանը նշված գրությունը ստացել է 2025 թվականի նոյեմբերի 20-ին (հիմք՝ [redacted] փոստային առաքանի):

1.2.1 2025 թվականի նոյեմբերի 25-ին պատշաճ ծանուցված Վարդան Աստվածատրյանի ներկայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/492/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով: Արձանագրության կազմման ժամանակ Վարդան Աստվածատրյանը նշել է, որ տեղյակ չի եղել իրավական կարգավորումներին:

1.2.2 2025 թվականի նոյեմբերի 27-ին Վարդան Աստվածատրյանի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ գործի քննությունը հետաձգելու մասին՝ պատճառաբանելով վարույթի նյութերը ստանալու և դիրքորոշում ներկայացնելու հանգամանքը: Հանձնաժողովի կողմից միջնորդությունը բավարարվել է, գործի նյութերը էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրվել են Վարդան Աստվածատրյանին, ով էլեկտրոնային փոստի միջոցով հաստատել է գործի նյութերը ստանալը, և գործի քննության օր է նշանակվել 2025 թվականի դեկտեմբերի 11-ը՝ ժամը 15:00-ն:

1.2.3 2025 թվականի դեկտեմբերի 11-ին կրկին Հանձնաժողով է մուտքագրվել Վարդան Աստվածատրյանի միջնորդությունը՝ գործի քննությունը հետաձգելու մասին, պատճառաբանելով, որ վարույթի նյութերը իր կողմից չեն ստացվել: Հանձնաժողովը, միջնորդությունը բավարարել է և գործի քննության օր է նշանակվել 2025 թվականի դեկտեմբերի 17-ը՝ ժամը 16:30-ը: Նշված ծանուցումը Վարդան Աստվածատրյանը ստացել է դեկտեմբերի 15-ին (հիմք՝ փոստային առաքանի [redacted]):

1.2.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Վարդան Աստվածատրյանի բացակայությամբ 2025 թվականի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 16:30-ին տեղի է ունեցել գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի դեկտեմբերի 17-ին Վարդան Սպարտակի Աստվածատրյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել գրավոր դիրքորոշում հետևյալ բովանդակությամբ՝

«Պետական մարմնի կողմից ներկայացված այն պնդումը, թե իբր «Բիզնես Զեթ-փիառ» գովազդային հրատակարչութուն ՍՊ ընկերության կողմից քաղաքական կուսակցությանը կատարվել է նվիրատվություն, որը հակասում է օրենքի պահանջներին, հանդիսանում է իրավական հիմքից զուրկ, կամայական և Սահմանադրությանը հակասող գնահատական, որը չի բխում ոչ ՀՀ իրավակարգավորումից, ոչ էլ մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից:

1. ՀՀ Սահմանադրության համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են գործել միայն Սահմանադրության և օրենքների հիման վրա: Առանց օրենքի կոնկրետ նորմի հղման ներկայացված մեղադրանքը բացահայտորեն խախտում է օրինականության այս հիմնարար պահանջը:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է միավորումների ազատությունը, ներառյալ քաղաքական կուսակցությունների գործունեությանն աջակցելու իրավունքը: Տնտեսվարող սուբյեկտի կողմից օրենքով չարգելված ձևով և սահմաններում կատարված գործողության

արհեստական քրեականացումը կամ վարչական որակումը հանդիսանում է այս իրավունքի անհամաչափ սահմանափակում:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է արդար դատաքննության և իրավական պաշտպանության իրավունքը, որը ենթադրում է, որ որևէ անձ կամ կազմակերպություն չի կարող ենթարկվել պատասխանատվության՝ առանց հստակ իրավական հիմքի, կանխատեսելի և իրավաչափ ընթացակարգի:

2. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը պաշտպանում է միավորման և քաղաքական գործունեությանը մասնակցելու ազատությունը: ՄԻԵԴ-ի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պետությունը չի կարող կամայականորեն սահմանափակել քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման օրինական աղբյուրները, եթե սահմանափակումը չունի հստակ օրենք, լեգիտիմ նպատակ և համաչափ միջոց:

ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ քաղաքական գործընթացներին միջամտող ցանկացած սահմանափակում պետք է լինի «օրենքով նախատեսված», «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» և «համաչափ հետապնդվող նպատակին» (տես՝ Republican Party of Russia v. Russia, Parti Nationaliste Basque - Organisation Organisation Régionale d'Iparralde v. France):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի բովանդակային տրամաբանությունից բխում է իրավական կանխատեսելիության սկզբունքը՝ որևէ սուբյեկտ չի կարող պատասխանատվության ենթարկվել այնպիսի գործողության համար, որի անօրինականությունն գործողության պահին հստակ սահմանված չի եղել:

3. Իրավական որոշակիության և կամայականության արգելքի սկզբունք

Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի կայուն իրավական դիրքորոշումների համաձայն՝ իրավական անորոշությունը ինքնին իրավունքի խախտում է: Պետական մարմինը չի կարող իր մեկնաբանությամբ ընդլայնել օրենքով սահմանված արգելքները կամ նոր արգելքներ ստեղծել՝ հատկապես քաղաքական դաշտում: Առավել ևս, անգամ առերևույթ, եթե կուսակցությունների մասին օրենքով նախատեսված այդ դրույթը հակասության մեջ է մտնում հիմնայուն Օրենքի հետ, ապա պետք է գործի Սահմանադրությունը:

Նման մոտեցումը ոչ միայն խաթարում է իրավական անվտանգությունը, այլ նաև հանգեցնում է օրինական տնտեսական սուբյեկտների քաղաքական իրավունքների փաստացի զրկման, ինչը անթույլատրելի է ժողովրդավարական հասարակությունում:

Վերոգրյալի հիման վրա՝

1. Հայցում ենք անհապաղ դադարեցնել «Բիզնես Զեթ-փիառ» գովազդային հրատարակչություն ՍՊ ընկերության նկատմամբ իրավական հիմք չունեցող պահանջը:

2. Պարտադրում ենք ներկայացնել կոնկրետ իրավական նորմի հստակ հղում (հոդված, մաս, կետ), որը, ըստ պետական մարմնի, խախտվել է:

3. Այդպիսի նորմի բացակայության դեպքում՝ պահանջում ենք պաշտոնապես արձանագրել պահանջի անհիմն լինելը:»:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/519/2025 գործում առկա նյութերը, Կուսակցության Տարեկան հաշվետվությամբ ներկայացված տվյալները, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Հանձնաժողովը Կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվության ստուգման արդյունքում պարզել է, որ Կուսակցության հաշվետվության «Ծանոթագրություն 1» թերթի «1.1 ֆիզիկական անձանց դրամական նվիրատվություններ» աղյուսակով 2024 թվականի նոյեմբերի 28-ին «Բիզնես զեթ-փիար» գովազդային հրատարակչություն ՍՊ ընկերության անունից Կուսակցությանը կատարվել է 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նվիրատվություն:

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Վարդան Աստվածատրյանը 22.03.2007 թվականից առ այսօր հանդիսանում է Ընկերության տնօրեն:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը:

4.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.3 Սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, **բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:**

4.5 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի **4-րդ մասի համաձայն՝ նվիրատվություններ չեն թույլատրվում՝** (…), **ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից,** այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից, (…):

4.6 Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվիրատվության գումարի չափով:

4.7 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենսգրքի 166.1-ին, 169.28-րդ, 169.31-րդ, 189.13-րդ, 189.14-րդ, 189.15-րդ, 189.16-րդ, 189.19-189.24-րդ, 206.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.12 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթի, մասնավորապես՝ իրավաբանական անձանց կողմից քաղաքական կուսակցություններին նվիրատվություններ կատարելու արգելքի նպատակը քաղաքական գործընթացների անկախությունն ու արդար մրցակցությունն ապահովելն է: Այդ արգելքը միտված է բացառելու ֆինանսական կամ տնտեսական լծակներ ունեցող սուբյեկտների կողմից քաղաքական կուսակցությունների վրա ազդեցություն գործադրելու հնարավորությունը, ինչպես նաև կանխելու քաղաքական որոշումների կայացման վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը:

Բացի այդ, նշված արգելքի նպատակն է ապահովել կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը, հավասար պայմաններ ստեղծել քաղաքական պայքարում ներգրավված բոլոր սուբյեկտների համար և պաշտպանել հանրային շահը: Իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին նվիրատվություններ կատարելու արգելումը նաև ծառայում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և հանրային վստահության պահպանմանը պետական և քաղաքական ինստիտուտների նկատմամբ:

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների կախվածությունը ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, նպաստելու բոլոր կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովմանը, սահմանափակելու կուսակցությունների վրա անտեղի ազդեցությունը, խթանելով արդարությունը և նվազեցնելով կոռուպցիայի ռիսկը, իսկ իրավաբանական անձանցից նվիրատվությունների անմիջական արգելքի միջոցով Օրենսդիրը նպատակ է ունեցել նպաստել քաղաքական ֆինանսավորման հաշվետվողականությանն ու հրապարակայնությանը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են իրավաբանական անձանց ներդրումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը:

Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից կուսակցություններին նվիրատվություններ կատարելն օրենսդրությամբ արգելելու հիմքում դրված է քաղաքական գործընթացների վրա իրավաբանական անձանց ազդեցությունը չեզոքացնելու օրենսդրի նպատակը, քանի որ իրավաբանական անձինք հաճախ ունենում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, որոնք քաղաքականության մեջ օգտագործվելիս հանրային շահի փոխարեն հանգեցնում են այդ կազմակերպությունների շահերի սպասարկմանը: Բացի այդ, վերը նշված կարգավորման արդյունքում ապահովվում է, որ կուսակցություններն ավելի շատ ակնկալեն անհատների՝ ֆիզիկական անձանց աջակցությանը, ինչը ենթադրում է հանրության աջակցություն կուսակցության վարած քաղաքականությանը կամ գաղափարախոսությանը: Մյուս կողմից, վերը նշված արգելքների բացակայության պայմաններում հասարակությունն ընկալում է, որ կուսակցությունները մեծապես ֆինանսավորվում են իրավաբանական անձանց կողմից, ինչն էլ, իր հերթին, կարող է խաթարել վստահությունը քաղաքական համակարգի նկատմամբ:

Միաժամանակ, իրավաբանական անձանց կողմից նվիրատվությունները կարող են հանգեցնել արտոնյալ վերաբերմունքի կամ քաղաքական որոշումների վրա ազդեցության ակնկալիքների և վերը նշված նորմով մեղմվում են նման ռիսկերը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Վարդան Աստվածատրյանի կողմից գրավոր դիրքորոշմամբ ներկայացված փաստերին և իրավական հիմնավորումներին, և գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ հիմքերով և հիմնավորումներով.

Հանձնաժողովը փաստում է, որ ցանկացած տեսակի իրավաբանական անձանց կողմից կուսակցություններին նվիրատվություններ կատարելու արգելքը Հայաստանի Հանրապետության օրենսդրության հստակ պահանջն է, այլ ոչ թե Հանձնաժողովի կամայական որոշումը, որի հիմնական նպատակը քաղաքական գործընթացների անկախության, թափանցիկության և մրցակցության ապահովումն է: Օրենսդիրը տվյալ սահմանափակմամբ ձգտել է բացառել տնտեսական ռեսուրսներ ունեցող իրավաբանական անձանց կողմից քաղաքական կուսակցությունների գործունեության վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն գործադրելու հնարավորությունը, կանխել քաղաքական որոշումների վրա ազդեցության առաջացումը, ինչպես նաև նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

Միևնույն ժամանակ, նշված արգելքը միտված է հանրային վստահության պահպանմանը քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման համակարգի նկատմամբ՝ ապահովելով, որ կուսակցությունների ֆինանսավորումն իրականացվի միայն օրենքով թույլատրելի աղբյուրներից և լինի վերահսկելի ու հաշվետու:

Հետևապես, Հանձնաժողովն արձանագրում է, որ քննարկվող դեպքում Ընկերության կողմից 2024 թվականի նոյեմբերի 28-ին 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով Կուսակցությանը կատարվել է նվիրատվություն, ինչը հանգեցրել է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով ամրագրված նորմի խախտմանն, այն է՝

իրավաբանական անձի կողմից Կուսակցությանը նվիրատվություն կատարելու արգելքի խախտմանը: Տվյալ դեպքում Ընկերությունը, հանդիսանալով օրենքով արգելված սուբյեկտ, կատարել է նվիրատվություն քաղաքական կուսակցությանը, ինչով խախտել է գործող օրենսդրության պահանջը, քանի որ իրավաբանական անձի անունից կատարվող նվիրատվության արդյունքում չեն պահպանվել Կուսակցությանն օրենքով չթույլատրված նվիրատվություններ կատարելուն ներկայացվող պահանջները՝ թույլ տալով Օրենսգրքի 189.21-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, ինչի վերաբերյալ Վարդան Աստվածատրյանը ծանուցվել է դեռևս 2025 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 01/4469-2025 գրությամբ:

Հաջորդիվ, անդրադառնալով Վարդան Աստվածատրյանի կողմից վկայակոչած փաստարկին առ այն, որ իրավական անորոշությունն ինքնին իրավունքի խախտում է և պետական մարմինը չի կարող իր մեկնաբանությամբ ընդլայնել օրենքով սահմանված արգելքները, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում առկա չէ իրավական անորոշության խնդիր, ինչպես նաև վարչական մարմինն իր մեկնաբանությամբ չի ընդլայնում օրենքով սահմանված արգելքները, քանի որ Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների համաձայն՝ իրավաբանական անձանց կողմից քաղաքական կուսակցություններին նվիրատվություններ կատարելը ուղղակիորեն արգելված է: Նշված արգելքը կրում է իմպերատիվ բնույթ և ենթակա չէ մեկնաբանման կամ բացառությունների, քանի որ օրենսդրի նպատակն է բացառել իրավաբանական անձանց միջոցով քաղաքական գործընթացների կամ կուսակցության ընթացիկ ֆինանսավորման վրա ազդեցություն գործադրելու հնարավորությունը՝ կուսակցություններին նվիրատվություն կատարելու միջոցով: Տվյալ դեպքում իրավաբանական անձը, պարտավոր էր պահպանել օրենսդրական սահմանափակումները, սակայն իրականացրել է կուսակցությանը նվիրատվություն, ինչով խախտել է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հստակ և իմպերատիվ պահանջը:

Վերոշարադրյալի արդյունքում սույն գործով իրավաբանական անձի կողմից խախտվել է Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջը՝ իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն՝ Վարդան Սպարտակի Աստվածատրյանը հաշվետու ժամանակահատվածում հանդիսացել է Ընկերության տնօրեն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Վարդան Սպարտակի Աստվածատրյանը՝ որպես իրավաբանական անձի տնօրեն, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է իրավաբանական անձի անունից կուսակցությանը կատարված նվիրատվության գումարի չափով տուգանքի նշանակում, սույն դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Կուսակցությանը կատարված նվիրատվության գումարի չափը կազմում է 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բիզնես զեթ-փիար» գովազդային հրատարկչություն ՍՊ Ընկերության անունից «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությանը նվիրատվություն կատարելու համար Ընկերության տնօրեն Վարդան Աստվածատրյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ նվիրատվության գումարի չափով՝ **300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:**

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Աստվածատրյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**